| Հ/Հ | **Ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության պայմաններ[1]**<br>*Ընդունվել է Բանկի Տնօրինության 10.04.2019թ. թիվ 03/12/19 որոշմամբ, գործող խմբագրությունը՝ 23.06.2022թ. թիվ 02/80/22 որոշմամբ և ուժի մեջ է ներքևում նշված ամսաթվից*<br>Պայմանները գործում են ՀՀ կառավարության 19.07.2018 թվականի N893-Լ որոշմամբ հաստատված՝ ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի («Ծրագիր») շրջանակներում | |
|---|---|---|
| 1. | Կանխավճար | Լիզինգի առարկայի արժեքի[2] 20% |
| 2. | Կանխավճար/Լիզինգի առարկայի արժեք հարաբերակցությունը | 20/100% |
| 3. | Ֆինանսավորման արժույթ | ՀՀ դրամ և արտարժույթ |
| 4. | Ֆինանսավորման սահմանաչափ | Լիզինգի գումարի նվազագույն շեմը՝ 5 մլն գերազանցող ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ<br>Ծրագրի շրջանակներում լիզինգառուի կողմից ձեռք բերվող սարքավորումների արժեքների հանրագումարը չպետք է գերազանցի 1,0 մլրդ ՀՀ դրամը[3] |
| 5. | Լիզինգի տարեկան անվանական տոկոսադրույք<br><br>Լիզինգի տարեկան փաստացի տոկոսադրույք | ՀՀ դրամով՝ մինչև 10-16%<br>Արտարժույթով՝ մինչև 6-10%<br><br>ՀՀ դրամով՝ մինչև 10.46-17.22%<br>Արտարժույթով՝ մինչև 6.16-10.47% |
| 6. | Տոկոսադրույքի սուբսիդավորման չափը[4] | ՀՀ դրամով ֆինանսավորման դեպքում՝ մինչև 10 տոկոսային կետ<br>Արտարժույթով ֆինանսավորման դեպքում՝ մինչև 6 տոկոսային կետ |
| 7. | Տոկոսադրույքի սուբսիդավորման պայմանները | Տոկոսադրույքը սուբսիդավորվում է Ծրագրովնախատեսված կարգով:<br>Ընդ որում՝ մինչև լիզինգի առարկան հանձնման-ընդունման ակտով լիզինգառուին հանձնելու օրը հաշվարկված տոկոսագումարների (առկայության դեպքում) սուբսիդավորումը կատարվում է մատակարարման փուլի (այն է՝ լիզինգի պայմանագրի կնքման օրվանից մինչ լիզինգի |

| | | |
|---|---|---|
| | | առարկան հանձնման-ընդունման ակտով լիզինգառուին հանձնելու օրը) մինչև 180 օր ժամկետի համար, իսկ մատակարարման փուլի՝ տվյալ ժամկետը գերազանցող ժամկետի համար հաշվարկված տոկոսագումարները ենթակա չեն սուբսիդավորման և դրանք ամբողջությամբ ենթակա են վճարման լիզինգառուի կողմից՝ պայմանագրով նախատեսված տոկոսադրույքին համապատասխան: |
| 8. | Լիզինգի տոկոսադրույքի հաշվարկման կարգը | Լիզինգի հիմնական գումարի նվազող մնացորդի նկատմամբ |
| 9. | Լիզինգի տրամադրման վճար | Չի գանձվում |
| 10. | Ֆինանսավորման ժամկետ | 1-ից մինչև 5 տարի |
| 11. | Ժամանակացույցով սահմանված ժամկետից շուտ մայր գումարի վճարում | Տույժեր և տուգանքներ չեն գանձվում վաղաժամկետ մարումը սուբսիդավորման գործողության ընթացքում կատարելու դեպքում, իսկ սուբսիդավորման դարարեցման կամ մերժման դեպքում՝ վաղաժամկետ մարված մայր գումարի նկատմամբ հաշվարկվում է միանվագ 0.5%, եթե վաղաժամկետ մարումը կատարվել է Լիզինգի տրամադրումից հետո առաջին 6 /վեց/ ամսվա ընթացքում |
| 12. | Տույժ՝ Լիզինգի մայր գումարի և/կամ Տոկոսադրույքի մարման պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար[5] | Տույժ՝ ժամկետանց Լիզինգի և/կամ ժամկետանց Տոկոսագումարի 0.13% չափով կետանցի /պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետների խախտման/ յուրաքանչյուր օրվա համար: Տույժերը և (կամ) տուգանքները սուբսիդավորման ենթակա չեն: |
| 13. | Լիզինգի գումարի և տոկոսագումարի մարումները | Ամսական մայր գումարի հավասարաչափ մարման եղանակով՝ համաձայն մարումների ժամանակացույցի |
| 14. | Մարման արտոնյալ ժամկետ | Լիզինգի հիմնական գումարի մարման համար սահմանված արտոնյալ ժամկետը լիզինգը տրամադրելու պահից հաշվարկվում է առավելագույնը 3 ամիս, իսկ լիզինգի չսուբսիդավորվող տոկոսների վճարման պարտականությունը լիզինգառուի մոտ առաջանում է լիզինգի տրամադրման պահից սկսած: Բացի այդ, լիզինգառուի դիմումով Բանկի կողմից կարող են սահմանվել լիզինգի հիմնական գումարի վճարման համար դադարի շրջաններ՝ տարեկան մինչև 6 ամիս ժամկետով. |
| 15. | Ապահովություն | • Լիզինգառուի տնօրենի և/կամ հիմնադրի և/կամ այլ անձի երաշխավորություն,<br>• Գույքի/իրավունքի գրավ՝ ըստ պահանջի |

| | | |
|---|---|---|
| 16. | Ապահովագրություն | Յուրաքանչյուր տարի լիզինգի առարկան ապահովագրվում է վնասվածքի և կորստյան ռիսկերից, որը կատարվում է Լիզինգատուի կողմից |
| 17. | Այլ պայմաններ | Մնացած պայմանները գործում են՝ համաձայն ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 893-Լ որոշման: |

[1] Սույն պայմանները կիրառելի չեն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի շրջանակում տրամադրվող լիզինգի դեպքում:

[2] Լիզինգի առարկայի արժեքը ներառում է լիզինգի առարկայի ձեռքբերման գինը, լիզինգի առարկայի Հայաստանի Հանրապետություն ներմուծման հետ կապված ծախսերը (տեղափոխում, այդ թվում՝ տեղափոխման հետ կապված այլ ծախսեր, մաքսազերծում, ավելացված արժեքի հարկ և այլն):

[3] Բացառություն են կազմում լիզինգառուի կողմից ձեռք բերվող թարմ պտուղբանջարեղենի և հատիկաընդեղենի տեսակավորման,փաթեթավորման ու հատիկաընդեղենի զտման գործունեության համար կիրառվող սարքավորումները, ինչպես նաև սպանդանոցային տնտեսություն, շարժական և շարժական մոդուլային սպանդանոցներ, սպանդանոցային ծառայություն մատուցողի կողմից ձեռք բերվող մսեղիքի տեղափոխման տրանսպորտային միջոցները, որոնց արժեքների հանրագումարը չպետք է գերազանցի 200.0 մլն ՀՀ դրամը:

[4] Նշված տոկոսային կետերի սուբսիդավորումը իրականացվում է 2022թ. ապրիլի 16-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ը տրամադրված լիզինգների դեպքում

- ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսվարողների համար սուբսիդավորվում է՝ ՀՀ դրամով տրամադրված լիզինգի 12, արտարժույթով տրամադրված լիզինգի 7 տոկոսային կետը, եթե ձեռք բերվող սարքավորումները շահագործվելու են նույն վայրերում:

[5] Տուժանքի (տույժի և/կամ տուգանքի) փաստացի կիրառման դեպքում Տուժանքի տարեկան դրույքաչափը և/կամ Տուժանքների հանրագումարի չափը գործում է ՀՀ օրենսդրությամբ նշված թույլատրելի առավելագույն չափերի սահմաններում: